ՄԻՋԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՅԹԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ

01/06 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «16» 01 2021 թ.

Հայաստանի Ազգային գրադարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աննա Չուլյանի (այսուհետ՝ Կատարող) մի կողմից և «Մելրոսը Զոյ» հայ-ամերիկյան միավորյալ ձեռնարկություն (այսուհետ՝ Պատվիրատու) (կազմակերպության անվանումը, տնօրենի անունը, ազգանունը) մյուս կողմից՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է տրամադրել պատվիրատուի կողմից պատվիրված միջգրադարանային բաժնույթային սպասարկման համապատասխան գրականությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար պայմանագիրը կնքելուց հետո 5-օրյա ժամկետում:

2. Պատվիրատուն ծառայության համար վճարում է 20.000 (քսան հազար) դրամ:

3. Վճարումը կատարվում է փոխանցումով: 1(մեկ) տարի ժամկետով

4. Կատարողը միաժամանակ Պատվիրատուին կարող է տրամադրել մինչև 10 միավոր գրականություն, յուրաքանչյուրը՝ 1 ամիս ժամկետով:

5. Պատվիրատուն պարտավորվում է գրականության յուրաքանչյուր միավորի անվնաս պահպանումը և ժամանակին վերադարձը:

6. Պատվիրատուն ստացած գրականության վերադարձնելու ժամկետները խախտելու դեպքում պարտավոր է Կատարողին վճարել տուգանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար 50 դրամ: Գրականության կորստի կամ վնասելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է Կատարողին փոխհատուցել կորուստը նույն գրքով կամ Կատարողին անհրաժեշտ գրականությամբ կամ փոխհատուցել գրքի շուկայական արժեքի 10-պատիկի չափով:

7. Պատվիրատուի կողմից գրականության վերադարձման ժամկետը կամ Հայաստանի ազգային գրադարանի միջգրադարանային բաժնույթից օգտվելու կանոնները խախտելու դեպքում Կատարողը իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը:

8. Գրականության տրամադրման, անվնաս և ժամանակին վերադարձի ապահովման պատասխանատվությունը դրվում է Բաժնույթների ենթաբաժնի վրա:

9. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև «16» 01 2022 թ.:

10. Կողմերը պարտավորվում են ծագած վեճերը լուծելու բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից:

ԿԱՏԱՐՈՂ՝	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ	«Մելրոսը Զոյ» հայ-ամերիկյան միավորյալ ձեռնարկություն
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՉՈՒԼՅԱՆ	
ՀՎՀՀ01506092	
Երևան 0009, Տերյան 72	
900018001538	
Երևանի թիվ 1 ՏԳԲ	

Կ. Տ.